ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ապրիլի 2022 թվականի №---Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի №308Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի օգոստոսի 14-ի «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասերը գրավադրելուն համաձայնություն տալու մասին» №308Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) համաձայնություն է տրվել «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) մասնակիցների 68,5 տոկոս բաժնեմասերը որպես հաջորդող գրավ հօգուտ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Բանկ) գրավադրելուն,

բ) Ընկերությունը 2022 թվականի մարտի 4-ի №274 և մարտի 21-ի №336 գրություններով խնդրել է նախաձեռնել Որոշմամբ նախատեսված Բանկի օգտին հաջորդող գրավով Ընկերության բաժնեմասերի տոկոսների փոփոխություններ՝ նկատի ունենալով, որ Ընկերության բաժնետոմսերի քանակային համամասնությունները փոփոխվել են դրանց ամբողջական թվերից հետո վերջից չորս թվերի կլորացման արդյունքում: Ի հետևանք նշվածի՝ կլորացվել են նաև Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի տոկոսների ամբողջական թվերից հետո վերջից չորս թվերը,

գ) ղեկավարվելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասով և Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշմամբ սահմանված էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող

անձանց նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու կարգով՝ Հանձնաժողովն իր 2022 թվականի մարտի 23-ի №ԳԲ/34.2-Մ2-10/882-2022 գրությամբ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության դիրքորոշմանն է ներկայացրել Ընկերության 2022 թվականի մարտի 4-ի №274 և մարտի 21-ի №336 գրություններով բարձրացված հարցը,

դ) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը 2022 թվականի ապրիլի 12-ի №01/11.1/2552-2022 գրությամբ հայտնել է, որ իր իրավասությունների շրջանակում չի առարկում Ընկերության մասնակիցների 68,5 տոկոս բաժնեմասերը որպես հաջորդող գրավ հօգուտ Բանկին գրավադրելու մասին Որոշմամբ նախատեսված Ընկերության բաժնեմասերի փոփոխություններին՝ կցելով նաև քննարկվող հարցի վերաբերյալ առարկություններ չունենալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները և Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 1-ին կետի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

h/h	Ընկերության մասնակից	Բանկում գրավադրված (հաջորդող գրավադրվելիք) բաժնեմաս (%)
1.	«ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ	29.093068
2.	Արտյոմ Խաչատրյան	11.908948
3.	Գուրգեն Խաչատրյան	11.908948
4.	Արամ Խաչատրյան	9.648612
5.	Հայկ Եսայան	2.970212
6.	Ալեքսանդր Եսայան	2.970212

»:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ պարտավոր է սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունից բխող գործարքների կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրերի պատճենները:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ապրիլի 2022թ.